

# ԱՒԵՏԱԲԵՐ




Հայ Կաթողիկե Ժողովրդապետություններու

14 մայիս 2017

ԺՁ. Տարի

Թիւ 21

**Ե. ԿԻՐԱԿԻ ՅԻՆԱՆՑ : ՏՕՆ ԵՐԵՒՄԱՆ ՍՐԲՈՅ ԽԱՉԻՆ (ճաշոց էջ 290)**



## ԺԱՄԱՄՈՒՏ

Քրիստոս յարութիւն առաւ մեռելներէն, իր մահով մահը խորտակեց եւ իր յարութեամբը մեզի կեանք պարգեւեց. յաւիտենապէս փա՛ռջ Անոր. ամէն:

## ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ ԳՁ.

Քրիստոս Թագաւորը օրհնութեան երգով բարեբանեցեք, արար աշխարհ:  
Երկինքը եւ երկիրը ստեղծողին երգով գոհաբանութիւն մատուցանեք, արար աշխարհ:  
Երրորդութեան ու մէկ Աստուածութեան պատիւ, երկրպագութիւն մատուցանեք յաւիտեան, արար աշխարհ:

## ՄԵՆԵԴԻ (Սաղմոս 85, 1 եւ 86, 2 եւ 87, 2)


Տէ՛ր, ականջդ ինձի խոնարհեցո՛ւր, լսէ՛ ինձի, որովհետեւ աղքատ եւ խեղճ եմ: Երուսաղէմի հիմերը իր սուրբ լերան վրայ հաստատուած են, Տէրը՝ Յակոբի միւս բոլոր բնակավայրերէն ալ անլի Սիոնի դռները կը սիրէ: Ո՛վ Տէր, փրկութեանս Աստուածը, գիշեր-ցերեկ քու առջեւդ ինկած՝ քեզ կը գոչեմ:

## ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ս. ՊՕՂՈՍԻ ԲԱՐՈՉՈՒԹԻՒՆԸ

Առաքեալներուն Գործերէն Է այս ընթերցուածը:  
(Գ. Առք. 17, 1-15)

Ամփիպոլիսէն ու Ապողոնիայէն անցնելով՝ եկան Թեսաղոնիկէ, ուր հրեաները ժողովարան ունէին: Ըստ սովորութեան, Պօղոս մտաւ անոնց մօտ եւ երեք շաբաթ յաջորդաբար անոնց հետ խօսեցաւ Ս. Գիրքի մասին: Բացատրեց անոնց, ապացուցանելով, թէ Զրիստոս պէտք է չարչարուեր եւ մեռելներէն յարութիւն առնէր եւ կ'աւելցնէր. «Զրիստոս, այս Յիսուսն է, զոր կը քարոզեմ ձեզի»: Անոնցմէ ոմանք համոզուեցան եւ անցան Պօղոսի եւ Շիղայի կողմը, ինչպէս նաեւ ասոնցմէ զատ շատ աստուածավախ մարդիկ, հեթանոսներ եւ բազմաթիւ ազնուագարմ տիկիկներ: Զրեաները սակայն, նախանձէ տարուած, հաւաքեցին գռեհիկ եւ անօրէն մարդիկ, ամբոխ կազմեցին եւ քաղաքը խռովեցին: Խռնուեցան Յասովնի տան առջեւ, կ'ուզէին զանոնք ժողովուրդին առջեւ հանել: Զգտնելով զանոնք, քաշեցին Յասովնը եւ ուրիշ եղբայրներ քաղաքապետին առջեւ եւ աղաղակեցին. «Այս մարդիկը ամբողջ աշխարհը խռովեցին եւ հիմա հոս հասած են եւ Յասովն անոնց բնակութիւն տուած է: Անոնք Կայսրին հրամաններուն հակառակ կ'ընթանան, երբ կ'ըսեն, թէ ուրիշ թագաւոր մը կայ Յիսուս անունով»: Այս աղաղակներով վրդովեցին բազմութիւնը եւ քաղաքապետները, որոնք երաշխաւորութիւն առին Յասովնէն ու միւսներէն եւ ապա զանոնք ազատ արձակեցին:

Եղբայրները փութով, Պօղոսն ու Շիղան, գիշերանց Բերիա դրկեցին: Զոն



հասնելով՝ իսկոյն գացին հրեաներու ժողովարանը: Անոնք անլի բարձրագի էին քան Թեսաղոնիկէի հրեաները եւ յօժարութեամբ ընդունեցան Աստուծոյ խօսքը: Ամէն օր կը քննէին Սուրբ Գիրքը ստուգելու համար, թէ բոլոր ըսուածները ճիշդ են: Շատեր հաւատացին, ինչպէս նաեւ հեթանոսներու մէջէն ազնուագարմ տիկիկներ եւ բազմաթիւ մարդիկ: Բայց Թեսաղոնիկէի հրեաները երբ իմացան որ Պօղոս Բերիայի մէջ Աստուծոյ խօսքը քարոզեց, եկան հոն ալ բազմութիւնը յուզելու եւ խռովելու: Եղբայրներն իսկոյն Պօղոսն ուղարկեցին ծովեզերք, իսկ Շիղա եւ Տիմոթէոս մնացին այնտեղ: Պօղոսին ընկերացողներն առաջնորդեցին իրեն մինչեւ Աթէնք եւ վերադարձան՝ հրահանգ բերելով Շիղայի եւ Տիմոթէոսի՝ շուտով իրեն միանալու:

**Ալելուիա, Ալելուիա,**

Ո՛վ Երուսաղէմ, դուն Տէ՛րը օրհնէ: Եւ դուն ալ ո՛վ Սիոն, քու Աստուածդ օրհնէ:  
(Սաղմոս 147, 12)

**Ալելուիա:**

**ԱԻԵՏԱՐԱՆ  
ՅԻՍՈՒՍԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ  
(Յովհ. 7, 14-23)**

Տօնական օրերուն կէտը անցած էր, երբ Տաճար ելաւ եւ սկսաւ սորվեցնել: Զրեաները զարմացած կ'ըսէին. «Ի՞նչ պէս Ս. Գիրքը գիտէ, քանի երբեք չէ սորված»: Յիսուս պատասխանեց. «Իմ վարդապետութիւնս ինձմէ չէ, այլ Անկէ, որ զիս դրկեց: Եթէ մէկը ուզէ անոր կամքը կատարել՝ պիտի տեսնէ թէ իմ վարդապետութիւնս Աստուծմէ՞ է, կամ ես ինձմէ կը խօսիմ: Ով որ ինքն իր անունով խօսի՝ իր փառքը կը փնտռէ, բայց ով որ փնտռէ փառքը զինք դրկողին՝ անիկա ճշմարիտ է եւ խաբէութիւն չունի: Միթէ Մովսէս չտուա՞ւ ձեզի Օրէնքը. եւ սակայն ձեզմէ ոչ ոք կը պահէ զայն: Ինչո՞ւ կ'ուզեք սպաննել զիս»: Բազմութիւնը պատասխանեց. «Դիւահարած ես, ո՞վ կ'ուզէ քեզ սպաննել»: Յիսուս աւելցուց. «Գործ մը կատարեցի եւ ամենքդ զարմացած էք: Մովսէս ձեզի թլփատութիւնը տուաւ, թէ-



պէտ Մովսէսէն չէ, այլ՝ նահապետներէն, եւ դուք զայն կը կատարեք շաբաթ օրը: Այսպէս, շաբաթ օրը մարդ կը թլփատեք, որպէսզի Մովսէսի Օրէնքը չլուծուի, ինչո՞ւ կը բարկանաք ինձի, որ շաբաթ օրով ամբողջ մարդ մը բժշկեցի»:

**ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ**

**ՄՈՎԱԻ ՅԱՂԹԵՍՑՈՒՔ...**

*Աստ՛վ պիտի յաղթենք թշնամիին: Ա՛յսպէս կ'երգենք մեր Հայրերուն հետ, Խաչի Երեւման տօնին օրը գոր կ'ոգեկոչենք այսօր:*

*Ի՞նչ է այդ ոյժը որ մեզ կարող կը դարձնէ յաղթելու մեր թշնամիին, այսինքն մեղձին՝ որ պատճառը եղած է մարդուն դատապարտութեան:*

*Մեր փրկութեան գործիքն է ան, անարգական խաչածէս փայտի կտորը գոր Քրիստոս ընտրեց կամաւոր կերպով, անոր վրայ խաչուելու եւ մեռ-*

*նելու համար, որպէսզի, ի վերջոյ՝ իր մահուամբը մահը ոտնակոխ ընէ:*

*Երբ կը կատարենք Խաչի Երկըրպագութիւնը, յատկապէս Քրիստոսի թաղման օրը, կը վերյիշենք փրկագործութեան խորհուրդը, գոր իրագործելու համար՝ Քրիստոս ան հրաժեշտ սեպեց փայտի մը վրայ գամւիլ ու մեռնիլ, պարզապէս մղուած անհուն սէրէ, գերազանց սէր մը՝ որու մեծագոյն ապացոյցը կեանքը զոհելն է, ինչպէս ինքը ըսած էր քա-*

նիցս եւ կանխատեսած ինժ իրեն համար:

Հնուց ի վեր մեզ, Հայերս, կը կոչեն խաչապաշտ ժողովուրդ: Եւ մենք կը պարծենանք այդ տիտղոսով: Բայց մեր պարծանքը չէ՛ խաչը պատելը, այդ փայտի կտորը որ Յիսուսի ժամանակ ամէնէն ամօթալի ու տաժանելի գործիքն էր ռերագործները պատժելու համար: Այլ կը պատենք՝ այն որ, անձնապէս եւ կամովին, ընդունեցաւ խաչը իր իր մահուան գործիքը, փարեցա՛ն անոր, գրկե՛ց զայն, ինչպէս կ'ըսեն կարգ մը սուրբեր, գրեթէ ողջունելով զայն իրր իր ցանկացած միջոցը՝ մարդկութիւնը փրկելու, զայն մեղքէն ազատելով:

Քրիստոնեային համար զոյգ նշանակութիւն ու տարողութիւն ունի խաչը, երեւութապէս հակասական՝ սակայն էապէս զիրար ամբողջացնող.

Նախ՝ չարչարանքի, ամօթի, նախատինքի խորհրդանիշ է ան: Եւ նիշդ ատոր՝ համար է որ Քրիստոս յանձն առաւ զայն, որովհետեւ Աստուծոյ դէմ գործուած առաջին մեղքը՝ անհրճազանդութիւնը, եւ անոր յաջորդող բոլոր մեղքերը, ա՛յնքան ահաւոր անարգանք էին Աստուծոյ նկատմամբ, որ համապատասխան քառութիւն կը պահանջէին: Քրիստոս, մարդկութեան այդ մեղքերը քառելու

համար, իր վրան առաւ զանոնք, եւ խաչը ընտրեց իրր քառութեան միակ միջոց:

Խաչը սակայն ունի ուրիշ, հրաշալի ու պանծալի իմաստ մըն ալ:

Յաղթանակի ու փառքի խորհրդանիշ է ան: Որովհետեւ Քրիստոս երեք օր միայն մնաց գերեզմանին մէջ: Երրորդ օրը վերստին առաւ այն կեանքը զոր կամովին տուած էր: Խաչը ժամանակաւոր մահուան պատճառ եղաւ եւ ապա յանգեցաւ փառաւոր յաղթանակին մահուան վրայ, իր յարութեամբը՝ որ մեր յարութեանն եւս երաշխիքն է:

Մենք կ'ըսենք թէ ամէնքս խաչ մը ունինք կրելիք, որովհետեւ այս աշխարհի վրայ ո՛չ ոք գերծ է ցաւէ ու տառապանքէ, քանի ամէնքս ատոր մէջ կը ծնինք: Խաչով՝ մենք Քրիստոսի նման կը դառնանք: Ուստի մենք եւս պարտինք մեր խաչն առնել եւ անոր ետեւէն երթալ, ինչպէս ըրին առաքելները եւ անոնցմէ ետք՝ բազմազար Քրիստոսի հետեւորդները որ հալածուեցան ու չարչարուեցան՝ իրենց հաւատքը արիարար հոշակելով եւ փառքով պսակուելով:

Ըստ Ս. Պողոսի՝ Խաչը յիմարութիւն է հեթանոսներուն համար, իսկ մեզի համար՝ Աստուծոյ իմաստութիւնն է ու անոր զօրութիւնը :

## ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Նագօ Յարութեան Գասապեան՝ 9 ապրիլ 2017 - Ս. Խաչ եկեղեցի  
Բաօլօ Բիօ Միքայէլ Գարագաշ՝ 22 ապրիլ 2017 - Ս. Խաչ եկեղեցի

## ՍՈՒՐԲ ՊՍԱԿ

Մանուէլ ճորձ Աւետիքեան ընդ Քրիստինա Անտրէ Էլ-Շըմալի՝ 22 ապրիլ 2017 - Ս. Խաչ եկեղեցի  
Միեր Զաքար Յակոբեան ընդ Սարին Մասիս Պչաքճեան՝ 23 ապրիլ 2017 - Ս. Խաչ եկեղեցի  
Սեպուհ Րաֆֆի Ալլունեան ընդ Հուրի Ժորժ Տէմիրճեան՝ 30 ապրիլ 2017 - Ս. Խաչ եկեղեցի

Tel.: 01/ 570 559 - Fax: 01/ 570 558 e-mail: [eparchy@armeniancatholic.org](mailto:eparchy@armeniancatholic.org)  
[www.armeniancatholic.org](http://www.armeniancatholic.org)